

խուռն կարսեցոց ժանտաբարոյից, գրեն թուղթ միաբանական ան Արզումանցիս եւ առ իս, յորդորելով չգնալ յԱխլձխա, այլ փոխիլ առ նոսա ի Փամպակ: Տուաք միաբանութեամբ պատասխանի՝ թէ անհնարին է փոփոխել իրացն յետ ընտրութեանն եղելոյ բազմապատիկ քննութեամբք, եւ խոստմանն եղելոյ առ պետութիւնն, եւ արձանագրութեանն յարքունի դիւանին: Իբրեւ զյոյս հատին նոքա ի կարնեցոց զաւլիսիալ որոշեցան դէմ եղեալ գնալ ի Փամպակ տունք յիտուն եւ երկու, որոց պիտաւորքն Չլենց Կարապետ, Ստեփանեան Յարութիւն, յորս յաւելաւ եւ Կարա Կեաւուրեան Կրիգոր՝ նորոգ դարձարարեալ ի Պօլսոյ ի վերջին աւուրս սեկնելոյ ուսաց յԱրզումայ, վասնզի խնամութիւն էր նորա ընդ Ստեփանեանին: Օղեն եւ ոսաաք, որ ի սոցասէ անցին յԱխլձխա, որոց առաջինն Սայօղու Գրիգոր:

Յետ այսր ամենայնի կանուխ պատրաստութեանց զհասարակածաւ մայիս ամսեանն սկիզբն եղև շուտ ժողովրդեան բազում աշխատութեամբ: Քանզի զայս ամ քստ ոչ սովորութեան յապաղեաց անձրեւն եւ ձիւն, որպէս ի դաշտս չգտանել ճարակ անասնոց, եւ տիղմն ի ձեանց եւ յանձրեաց դեռ ունէր զամենայն ճանապարհս: Սակայն նայեցեալ ընդ բազմութիւն զաղթական ժողովրդեան բազմագոյն սայլից պէտք էիս լսաղաղուցասել զսոսա ի դէմ եղեալն, եւ պետութեան շէր իշխելի բուռն առսել շրջակայ գեղջէից հաց փութալ յայս աշխատութիւն, զի եւ նոքա ուղտոյ լրսել հասդերձեալ էին, թէպէտեւ յօժարելոցս չկային արգելք, որք եւ օտառակեցին ոչ սակաւ յօգուտ իրեանց: Յաղագս որոյ ճարտարամտաց Բասարատիէւ կուսակալ Կարոնոյ եւ հրամանատար Հայաստանեայց, պատուէր յղեաց ի Կարս զի ի բովանդակ գաւառին որչափ եւ սայլք իցեն հայոց եւ թուրքաց առհասարակ շարժեցին յԱրզում, որոց ի բեռնակրութիւն սակ արկ Առաջնորդն Կարնոյ Կարապետ վլալորդապետ] ութսուն զորու ի դանթար, եւ երեք ոգիք մի դանթար, թէպէտեւ յետոյ նուազեաց գինն: Եւ եւ յարքունուտ ողորմութիւն աղքատաց քսան եւ հինգ մանէթ առ մէն մի տուն քաղաքացեաց եւ գեղջէից բաշխեալ յիմ ձեռն, զերրորդ մասն տալով յսկիզբն ճանապարհին եւ զստացեալն ի կատարածին (երեք մանէթ մի պաճալսի ոսկի է): Այսպէս եւ ալիւր քստ պիտոյից ճանապարհին: Սակայն եւ ի ժողովրդեսէս մերմէ հանգստակեցաք, որոց արտաքոյ մնային ցուցակին տուելոյ յարքունիս:

Յանգէտս իմն մեծապէս վրիպեաց Առաջնորդն, զի համարելով թէ սայլքըն պատրաստեալք ոչ բաւեն տանել զժողովուրդն՝ համայնգամայն ետ հրաման հանել զի սայլորդքն վարձուորք տարեալ ի Կարս թողցեն զժողովուրդն եւ դարձցին ի բառսել զմնացեալսն: Հասանեն սայլք ի Կարս, եւ զի յետուստ ոչ մնայր ժողովուրդ առ ի գալ, ցրուին սայլքն յիւրաքանչիւր տեղիս եւ ժողովուրդն մնայր ի գետնի. որով ընդ ամիսս յերկարեաց այս ճանապարհորդութիւն, եւ ի ծանր աղքատութիւն անկաւ ժողովուրդն: Այլ վասն այս ամենայն պատրաստութեանց մինչ կատարումն ելանելոյ ժողովրդեան, եւ ցվերջին օրն դատարկելոյ քաղաքին պար[տք] ի վերայ ինձ աւուր ընթանալ ի դուռն Բանգրագիւիւն, որ եւ միշտ քաղցրութեամբ ընդունէր զխնդրուածս իս, եւ զկարեւորսն ուսուցանէր եւ պատուիրէր մեզ: Այսպէս էր ինձ միշտ աշխատ առնել եւ զերկու ի զլիաւոր գործավարաց նորա. մին էր Խաչատուր պէկ Շահնազարեան՝ նախկին թարգմանն, եւ միւսն եւս Պէճման Կոռկանով երիտասարդ հայկազուն թիֆլիզցի:

Յայս ամենայն նախաշախիտ արարս դիպողագոյն դատեալ եղև համաձայնութեամբ ուղղափառաց եւ այլափառաց յղել յԱխլձխա գործակալս ոմանս ի դիմաց ժողովրդեան պատրաստել զնացողացն տեղի բնակութեան: Եւ առաքեցան երկու ի հայոց եւ երկու ի մէնջ, մին յատուկ Ախլձխացի Յո-

10 Պանկրատե Նիկիտա Պետրովիչ (1788—1836)—ռուսական բանակի գեներալ-աղյուտանտ, ապա գեներալ-լեյտենանտ: 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում հատուկ ջոկատով գրավեց Բալաղետի փառաշուքը: 1830 թ.—Առանձին Կովկասյան կորպուսի շտաբի պետն էր, իսկ 1831 թ. Անդրկովկասում ռուսական զորքերի հրամանատարը: